ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄՈՒՄ

Սույն թվականի հունվարի 25-ին Գեղարքունիքի թեմի Առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում հավաքվել էին թեմի քահանայական դասը, հավատացյալները, Գավառի պաշտոնատար անձինք: Թեմի առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը քահանա էր ձեռնադրում Տիգրան սարկավագ Մարտիրոսյանին:

Նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց «Կոչումն ընծայութեան» կարգը, երբ նորընծան հանդիսավորապես հանձն է առնում հետևել ուղղափառ դավանության և «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ, և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Հունվարի 25-ին, ժամը 11-ին, սկսվեց Ս. Պատարագը:

Պատարագիչն էր Սրբազան Հայրը: Տիգրան սրկ. Մարտիրոսյանը, առաջնորդությամբ խարտավիլակ Տ. Մեսրոպ քահանայի, բարձրանում է խորան և «Աստուածային և Երկնային» շարականի երգեցողությամբ, հավատացյալների առջև բարձրացնում է ձեռքերը դեպ արևմուտք՝ ի նշան աշխարհից հրաժարման:

Սրբազան Հայրը ձեռնադրեց և օծեց Տիգրան սարկավագին՝ վերանվանելով Տ. Գնել քահանա:

Ձեռնադրությունից հետո Սրբազան Հայրը պատգամ տվեց նորընծա քահանային և հորդորեց սրբությամբ և ուղղությամբ ծառայել Աստուծոյ և ժողովրդին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Տ. Գնել քահանային ձեռնադրության առթիվ և մաղթում հաջողություններ իր ծառայության մեջ: